«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ - Նախադպրոցական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման եղանակները

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Բաղմանյան Լուսինե Զավենի

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն 2

Ներածություն 3

Գլուխ 1. Նախապրբենական փուլի կազմակերպման նպատակները..... 6

Գլուխ 2. Նախապրբենական փուլի կազմակերպման խնդիրները..... 8

Գլուխ 3. Նախապրբենական փուլի ուսումնական խնդիրները.....9

Գլուխ 4. Սովորողների ձեռք բերած գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացված պահանջները նախապրբենական փուլի ավարտին 11

Գլուխ 5.Նախապրբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը.....13

Գլուխ 6. Նախապրբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները 14

Գլուխ 7. Նախապրբենական շրջանում սովորողներին տրամադրվող ընդհանուր գիտելիքներն ու գաղափարները, ըստ չափորոշիչների 15

Գլուխ 8. Նախապրբենական շրջանը ավարտելիս կկազմենք բանավոր հարցման ձևավորող(ուսուցանող), ոչ միավորային գնահատման ռուբրիկ.....20

Գլուխ 9. Նախապրբենական շրջանում գրելու նախապատրաստում..... 22

Եզրակացություն 24

Օգտագործված գրականություն 25

Ներածություն

Նախաայբբենական փուլի կազմակերպումը հանդիսանում է մայրենի լեզվի ուսուցման ամենակարևոր փուլերից մեկը, որը տրամադրում է դպրոց ներ ոտք դրած երեխաներին սիրել մայրենի լեզուն, ցանկանալ սովորել մայրենի լեզուն, սիրով կարդալ և գրել մայրենի լեզվով, չվախենալ ուսման ընթացքում առաջացած և ոչ մի դժվարությունից:

Յուրաքանչյուր տարի դպրոց են գալիս երեխաներ, որոնց վեց տարեկանը դեռ նոր է բոլորել, շատ ժամանակ դեռ նույնիսկ հինգ տարեկան են լինում: Երեխաների մի մասը հաճախում են նախադպրոցական հաստատություններ և որոշ չափով պատրաստ են լինում դպրոց հաճախելուն, անգամ լինում են երեխաներ, որոնք կարողանում են կարդալ և հաշվել, մի մասը՝ որևէ նախապատրաստվածություն չունի և բացարձակ չեն պատկերացնում, թե ինչ է իրենց սպասվում դպրոցում:

Ելնելով վերը նշված խնդիրներից, մեր «Այբբենարան»-ների հեղինակները, այն կազմել են այնպես, որ առաջին դասարանի բոլոր սովորողների համար գիրքը լինի հետաքրքիր, զվարճալի և իհարկե մատչելի: Գրքի այդպիսի կառուցվածքը սովորողների մոտ ձևավորում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, սեր դեպի մայրելի լեզուն և այլն: Չէ որ առաջին դասարանում մայրենի լեզուն մյուս բոլոր ուսումնական առարկաների շարքում առանձնահատուկ տեղ ու դեր ունի: Մայրենի լեզուն հանդիսանում է գործիք, որի միջոցով հետագայում սովորողները պետք է ուսումնասիրեն տարբեր առարկաներ և կատարեն բազմաբնույթ հետազոտություններ ու աշխատանքներ:

Մայրենի լեզվի ուսուցումն առաջին դասարանում ունի ոչ միայն կրթական, այլ նաև դաստիարակչական ու ճանաչողական նպատակներ ու խնդիրներ, քանի որ մայրենի լեզվի միջոցով սովորողների մեջ զարգանում է տարբեր արժեհամակարգեր, որոնցից կարևորագույնը այսօրվա դրությամբ հայրենասիրությունն է:

Ռուս դեմոկրատ-մանկավարժ, գիտական մանկավարժության հիմնադիրը Ռուսաստանում, «ռուս ուսուցիչների ուսուցիչ» Կոնստանտին Դմիտրևիչ Ուշինսկու մշակած կրթադաստիրակչական աշխատանքների համակարգում մեծ տեղ է հատկացված մայրենի լեզվին, որը ամենամեծ մանկավարժն ու դաստիրակն է մարդու և առավել ևս երեխայի կյանքում, որը աշխարհն ընկալում է մայրենի լեզվի

միջոցով և մայրենի լեզվի մեջ: Ուսումնասիրելով մայրենի լեզուն, երեխան ոչ միայն հնչյուններ և տառեր է սովորում, այլև հոգևոր կյանք և ուժ է հավաքում իր գիտակցության և հոգու մեջ: Մայրենի լեզուն, մեր դեպքում հայոց լեզուն, հանդիսանում է ամենահին ու ամենագեղեցիկ լեզուներից մեկը: Իզուր չէ, որ Անդրեյ Բիտովը ասել է «Ես երջանիկ էի հայերեն խոսքի կարկաչյունով և ճարճատյունով: Ես լսում էի օտար խոսքը և հմայվում էի նրանով: Իսկապես, կոշտի, շիկացածի և զարմանալիորեն փափուկի, քնքուշի ինչպիսի զուգադրում: Ինչպես կոշտ, այրված հողը և հյութալի պտուղը, որը հասունանում է նրա վրա»: Եթե օտարներն են հիանում մեր մայրենի լեզվով, ապա մենք ու մեր երեխաները պետք է ոչ միայն հիանանք, այլ նաև հպարտանանք, որ այդ լեզվի կրողն ենք:

Պետք է լավ տիրապետել մայրենի լեզվին, քանի որ հենց նրա միջոցով կարելի է օգտվել մայրենի լեզվի հրաշալի գանձերից, այն միջոց դարձնել աշխարհը ճիշտ ճանաչելու, անընդհատ զարգանալու ու կատարելագործվելու համար: Այս առումով մայրենի լեզվի ուսուցումը պետք է իրականցվի ոչ միայն բուն մայրենի լեզվի, այլև մյուս առարկաների դասերին միջառարկայական կապեր ապահովելով, խիստ ուշադրություն դարձնելով բանավոր խոսքին: Ուսուցիչը պետք է մտահոգ լինի և վերահսկի սովորողների բառապաշարի հարստացումը, լեզվական ու արտասանական թերությունների ու սխալների հաղթահարումը և խոսք կառուցելու կարողության զարգացումը հենց առաջին դասարանից բոլոր ուսումնական առարկաների դասերին:

Հայ խորհրդային մանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ Աշոտ Երեմի Տեր-Գրիգորյանը, ով հանդիսանում է վեց տարեկանների ուսուցման առաջին գիտափորձի հեղինակը, գրել էր,-« Ավելի շատ խաղ, ուրախություն ու զվարճանք պետք է լինի, և համեմատաբար քիչ՝ լուրջ աշխատանք, ավելի քիչ՝ պարտադրանք, շատ՝ վարժեցում»: Ելնելով պրոֆեսորի գրածից, հարկավոր է առաջին դասարանում ուսուցումը կազմակերպել և իրականացնել խաղերի միջոցով: Գրաճանաչության նախապատրաստական փուլը միտված է սովորողներին նախապատրաստել ուսումնական գործընթացին թե՛ հոգեբանորեն, թե՛ ֆիզիկապես և թե՛ լեզվական տեսանկյունից, ուստի այդ փուլը տևում է բավականին երկար:

«Այբբենարան»-ում գրաճանաչության ուսուցումը կազմակերպված է երեք փուլերով:Այդ փուլերը տարիների փորձով հիմնավորված են, ընդունված և գիտականորեն ապացուցված են: Դրանք են.

- *նախաայբբենական շրջան*
- *այբբենական շրջան*
- *հետայբբենական շրջան*

Նախաայբբենական փուլն ավարտվում է «Ա» հնչյուն-տառի ուսուցման մեկնարկով, որը այբբենական փուլի սկիզբն է, այդ օրը հանրապետության գրեթե բոլոր դպրոցներում անց է կացվում տոնական մթնոլորտում: Հրաժեշտ տալով նախաայբբենական փուլին, ոտք ենք դնում այբբենական փուլ, որտեղ արդեն նկար-պատմություններից բացի կան տառեր, որոնց միջոցով պետք է կարդանք և աշխարհն ընկալենք ոչ միայն աչքելով տեսածի հիման վրա, այլ մտքով վերլուծելով կարդացածը:

Գլուխ 1
Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները

Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար պատմությունները, նախադասության ու բառի ընդհանրացված գծապատկերները, խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքն են:

Նախագրային բաժինը կառուցված է այնպես, որ սովորողների մեջ արթնացնի հետաքրքրություն, սեր գրքի ու դպրոցի նկատմամբ և իհարկե սովորելու ցանկություն:

Կատարելով դասագրքի տարաբնույթ առաջադրանքները սովորողը իրեն վստահ և ուժեղ կզգա, աշխատանքները կատարելիս կշփվի դասընկերների հետ, կհամագործակցի նրանց և ուսուցչի հետ, այդ աշխատանքները անկասկած սովորողին կուրախացնեն, կզվարճացնեն և նրանք իրենց հաջողակ կզգան և պատրաստ նոր փուլին:

Նախաայբբենական փուլում պետք է զարգացնենք սովորողների մտածողական կարողությունները, քանի որ երեխան պետք է կարողանա մտածել և ոչ թե պարզապես հիշել, կամ անգիր անել ինչ որ տեղեկություն, մտածելով և հասկանալով պատասխաններ տալիս երեխաները կրկնակի բերկրանք են ապրում և այդ գիտելիքը ավելի հիմնավոր է մնում նրա գիտակցության մեջ:

Կրտսեր տարիքի երեխաներին շատ են հետաքրքրում լեզվատրամաբանական ուսուցանող առաջադրանքները, որոնց միջոցով ավելի դյուրին է դառնում նյութի յուրացումը և երեխան կապվում է գրքին: Սովորողները իրենց սովորածը համեմատում են իրար հետ, մրցում են և ձգտում իմանալ ավելին: Հետևաբար զարգանում է նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու , կամք դրսևորելու ունակություններ:

Նախաայբբենական փուլում սովորողներին պետք է սովորեցնել կատարել զանազան համեմատություններ, գտնել առարկաների նմանություններն ու

տարբերությունները, վարժվել երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս, սովորել գտնել, թե որ առարկաներն են «ընկերներ», որ առարկաները՝ «հակառակորդներ», վարժվել մտնել և դուրս գալ բավիղներից՝ աշխատեցնելով հայացքը և միտքը, առարկաների միջից գտնել «ավելորդը», առարկաները դասակարգել ըստ որևէ հատկանիշի, նկարել առարկաների պակասող մասերը, գունավորել ու գծել, կատարելագործել դաստակի ու մատների մանր մոտորիկան: Վարժեցնել, որ կարողանան պատմությունից առանձնացնեն նախադասություն, նախադասությունից՝ բառ, իսկ բառերը վանկատեն և հնչյունային վերլուծության ենթարկեն: Սովորեցնել, որ իմանան ինչ է և ինչպիսին է նախադասության, բառի գծապատկերները, իմանան որն է վանկային կորը, տարբերեն ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Իմանան ձայնավոր հնչյունի վանկարար դերի մասին:

Սովորողների մոտ զարգացնել հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունն առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու հմտությունը, մտքերը շարադրելու կարողությունը:

Այս նպատակները կարելի է իրականացնել միայն երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որտեղ երեխան իրեն զգում է հանգիստ և անկաշկանդ, իհարկե գործընթացին նպաստում է նաև գունագեղ դասագիրքը, հետաքրքրաշարժ առաջադրանքներն ու դասանյութի մատուցման խաղային հնարքներն ու եղանակները:

Գլուխ 2
Նախադպրոցական փուլի կազմակերպման խնդիրները

2.1 Նախադպրոցական փուլի կազմակերպման խնդիրներից է երեխաների ծանոթացումը նրանց համար նոր ուսումնական գործունեությանը, որը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ
- աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում
- ծանոթություն կրթական տվյալ հաստատության կարգուկանոնին , դպրոցական շենքին
- ծանոթություն երեխաների իրավունքներին և պարտականություններին
- աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում
- ուսուցչին, ընկերներին և իրեն դիմած յուրաքանչյուրին բարձրաձայն, հստակ և ամբողջական խոսքով պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը լսելու, հասկանալու նրա տված հանձնարարությունները, կատարելու ունակության զարգացում,
- ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորում
- գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում:

2.2 Նախադպրոցական փուլի կազմակերպման խնդիրներից է նաև սովորողների հարմարեցումը ուսումնական գործունեությանը (ադապտացիա):

Հարմարեցում.

- դպրոցին
- դասարանին
- դասընկերներին
- նստատեղին
- ուսումնական գործընթացին
- տնային աշխատանքների կատարմանը

Գլուխ 3
Նախապրբենական փուլի ուսումնական խնդիրները

3.1. Ուսումնական գործունեությանը երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտում

Ուսումնական խնդրի ուսումնասիրությունն ուսուցիչը պետք է իրականացնի մինչև ուսումնական տարվա սկսելը՝ ուսումնասիրելով դասարանի աշակերտների անձնական գործերը, զրուցի ծնողների հետ, յուրաքանչյուր երեխայի համար լրացնելով հարցաթերթիկ, որտեղ զետեղված կլինեն անձնական տվյալներ, կապված երեխայի նախասիրությունների, վարքային խնդիրների, մտավոր զարգացման խնդիրների և առողջական խնդիրների մասին: Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր հիմք է հանդիսանում ուսուցչի համար՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար: Երեխաների հետ ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի շուրջ իրականացվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով: Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

1. *Բանավոր խոսքի մակարդակը*
   - *խոսելու, բացատրվելու, հարցեր տալու կարողությունը*
   - *ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու կարողությունը*
   - *ուսուցչի հանձնարարությունները կատարելու ունակությունը*
   - *ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակության մակարդակը*
2. *Հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.*
   - *բառերն արտասանվում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ*
   - *հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով (ունի լեզվական արատ)*
   - *ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք,*
   - *ունի արտահայտիչ խոսք,*
3. *Բանավոր կապակցված խոսք.*

- *ունի իր տարիքին համապատասխան բառապաշար,*
- *անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ,*
- *գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ),*
- *ուսուցչի հարցերի օգնությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ-երկու՝ մտքով իրար հետ կապված նախադասություն,*
- *ուսուցչի, տարեկիցների և ավագների հարցերին պատասխանում է ընդարձակ (համառոտ) և ավարտուն նախադասություններով,*
- *ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված է, չի խոսում,*

4. ***Խոսքի շարահյուսական կառույցը,***

- *կազմված է հստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն, պարզ նախադասություններով,*
- *կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով,*
- *կապակցված խոսքում օգտագործված նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական, պատճառահետևանքային կապերը,*
- *չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն*
- *նախադասությունները թողնում է անավարտ և անցնում նոր մտքի,*
- *նախադասությունները թողնում է անավարտ:*

Ելնելով իրականացված այս ուսումնասիրություններից, ուսուցիչը հավաքագրում է տվյալներ յուրաքանչյուր սովորողի մասին և ուսումնական գործընթացը կազմակերպելիս հաշվի է առնում ամբողջ ինֆորմացիան, կազմակերպում է որոշակի աշխատանքներ ծնողների հետ, որը կնպաստի սովորողի ուսումնական գործընթացին հեշտ ինտեգրվելուն:

Գլուխ 4
Սովորողների ձեռք բերած գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացված պահանջները նախաայբբենական փուլի ավարտին

4.1. Նախաայբբենական շրջանի ավարտին ձեռք բերած հմտություններ

Նախաայբբենական փուլի ավարտին սովորողները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Այս ամենը նպաստում է գրաճանաչության փուլ սահուն անցնելու և սովորողներին հավելյալ սթրեսային իրավիճակից զերծ պահելու համար:

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականցնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է՝

- *գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի, (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթներն օգտագործեն խոսքում,*
- *պարզագույն գծապատկերների միջոցով կարողանան ներկայացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը,*
- *ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և համապատասխան գույնով ներկեն բառ-գծապատկերում առկա ձայնավոր հնչյունները*
- *գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմավորման գործում,*
- *ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու (2-3 նախադասությամբ) կարողություն,*
- *ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն,*
- *ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների միջև հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,*
- *կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս տեղադրության:*

4.2. Նախաայբբենական շրջանի ավարտին ձեռք բերած ունկնդրման և խոսքայի հմտություններ

Նախաայբբենական փուլի ավարտին պակաս կարևոր չէ սովորողների լսածը վերարտադրելու կարողության ձևավորումը, ուստի այդ կարողությունների ձևավորմանը և կիրառմանը նույնպես ներկայացված են որոշակի պահանջներ: Սովովորողները պետք է՝

- *կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները, պատմվածքները, բանաստեղծություններն ունկնդրել և հարցերի օգնությամբ վերարտադրել*
- *անգիր իմանան և արտահայտիչ արտասանեն սովորած բանաստեղծությունները, շուտասելուկները, առածներն ու ասացվածքները*
- *կարողանան մանկական թեմայով առանձին նկարների շուրջ իրար կապված 2-3 նախադասություն կազմել, որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառերի քանակը (ուսուցչի հարցերի օգնությամբ)*
- *կարողանան պատմել ըստ տեսածի, ըստ ունկնդրածի, ըստ հիշողության, ըստ նկարի*
- *կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների (խաղալիքներ, սպասք, ծաղիկներ և այլն) և ըստ նրանց հատկանիշների (փայտից է, քաղցր է, հոտավետ է և այլն)*

Գլուխ 5
Նախապայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը

Նախապայբբենական շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաչության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին:

5.1. Խոսք: Մեծադիր թեմատիկ նկարի շուրջ ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները կազմում են մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն, որոնց ամբողջությունը հետագայում նրանք անվանում են պատմություն: Տարբեր նկարների շուրջ երեխաներն ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում են ունկնդրած փոքրիկի պատմվածքներն ու հեքիաթները: Երբ այս կարողությունները որոշակի մակարդակով ձևավորված են, կարելի է անցնել հաջորդ քայլին՝ գաղափար տալ գծապատկերի մասին: Այդ նպատակով ուսուցիչը բացատրում է, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու, այսինքն՝ գծել: Գծելով մի ուղղանկյուն ուսուցիչը նշում է, որ դա պատմության «տնակն է» և պատմությունն ապրում է այդ տնակում: Կգանք եզրակացության, որ բոլոր պատմություններն ունեն տնակներ: Խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար աշխատանք տանել մտքով իրար հետ կապված նախադասություններ կազմելու կարողության մշակման և երեխաներին անընդհատ խոսեցնելու ուղղությամբ՝ խոսքը զուգորդելով լիարժեք գործողություններով: Պետք է աստիճանաբար հասնել նրան, որ աշակերտները կարողանան գրագետ և ամբողջական խոսքով արտահայտել այն, ինչ կատարում են: Առաջին շրջանում ուսուցիչն ինքը տա խոսքի նմուշ՝ անընդհատ խոսելով երեխաների հետ:

5.2. Նախապայբբենական շրջանում իբրև նմուշօրինակ ուսուցչի հյուսած պատմությունը պետք է

- Հնչի հանդարտ, պարզ, երեխաներին ընկալելի ոճով
- Կազմված լինի 3-4 նախադասությունից
- Նախադասությունները կազմված լինեն 2-3 բառից
- Նախադասության կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից
- Խոսքը պետք է զուգորդվի ցուցադրումներով

Գլուխ 6
Նախաայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները

Նախաայբբենական շրջանի պարապունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, մասնավորապես ուշադրության և հիշողության առանձնահատկությունները.

Երեխաները երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ՝ դասի յուրաքամնչյուր փուլում պարապունքն իրականացնելով դասի ընդհանուր պլանին և նպատակին համապատասխան:

Աշխատանքը դասի ժամանակ կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդհատվեն երեխաների ակտիվ գործունեությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով: Դասերի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ և խաղային պահեր. հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար, ռիթմիկա և այլն:

Նախաայբբենական դասի հիմնական մեթոդական շղթան (շղթայի քայլերն իրականացվում են երկու դասաժամի ընթացքում).

1.Կազմակերպական պահ.

2.Տնային աշխատանքի ստուգում

3.Ֆիզկուլտ դադար

4.Անցած ուսումնական նյութի կրթություն, ամրակայում.

5.Հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարների շուրջ հարցազրույց

6.Շարժուն խաղեր.

7. Հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում.

8.Դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր.

9.Նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ.

10.Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ.

11.Գրում.

12. Ամփոփում:

Գլուխ 7
Նախաայբբենական շրջանում սովորողներին տրամադրվող ընդհանուր գիտելիքներն ու գաղափարները, ըստ չափորոշիչների

Ըստ չափորոշիչների սովորողները նախաայբբենական շրջանում պետք է գաղափար ունենան.

- *նախադասության մասին*
- *բառի մասին*
- *բառի կազմության և վանկի մասին*
- *հնչյունի մասին*
- *ձայնավոր և բաղաձայն հնչյունի մասին*

7.1. ***Նախադասություն***

Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելու, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելու տարրական կարողության ձևավորումից հետո պիտի մշակել ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն: Այդ կարողության մշակման համար ուսուցիչը դանդաղ, նախադասություն առ նախադասություն պիտի արտասանի պատմությունը՝ առաջարկելով հաշվել, թե այն քանի մասից է կազմված: Աշակերտները հաշվում են և որոշում, որ պատմությունը կազմված է,ասենք երեք մասից: Ուսուցիչը երեխաների օգնությամբ պատմության գծապատկերը բաժանում է մասերի՝ բացատրելով, որ եթե պատմությունն ունի 3 մաս, ուրեմն գծապատկերը ևս պետք է ունենա 3 մաս: Այնուհետև պետք է բացատրվի, որ այս մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մաս է և պատմության բովանդակության հետ կապված մեկ միտք է արտահայտում: Ուրեմն պատմության մեջ կա 3 միտք: Ապա միտք բառի փոխարեն երեխաները սովորում են օգտագործել նախադասություն բառը և գծել նախադասության գծապատկերը: Այնուհետև երեխաներին պետք է բացատրել, որ ամեն մի առանձին, նոր սկսվող միտք՝ նախադասություն, պետք է գրել մեծատառով: Երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել նաև գծապատկերի վերջում դրված վերջակետի վրա և բացատրել, որ նախադասության գծապատկերի վերջում դրված է երկու կետ:

Դա նշանակում է, որ միտքն ավարտված է, նախադասությունը վերջացել է և վերջում դրված այդ կետերին այսուհետ կանվանենք վերջակետ:
Այսպիսով՝ աշակերտներն իմանում են, որ ամեն մի պատմություն կազմված է նախադասություններից, իսկ նախադասությունը սկսվում է մեծատառով, և վերջում դրվում է վերջակետ:



7.2. Բառ

Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար կտրվի բառի մասին, որպեսզի բառն ամենից առաջ ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս և ապա նոր՝ որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:

Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերների օգնությամբ: Ուսուցչուհին դանդաղ դադարներով արտասանում է նախադասությունը՝ այն բաժանելով մասերի: Երեխաներն ուսուցչի օգնությամբ որոշում են նախադասության մասերի թիվը: Ուսուցչի օգնությամբ նախադասության գծապատկերը բաժանվում է մասերի: Այնուհետև մաս բառը փոխարինվում է բառով: Իբրև բառ ներկայացվում է նաև օժանդակ բայը:

Գծապատկերի շուրջ տարվող վերլուծական աշխատանքը ժամանակատար, աշխատատար գործընթաց է և ուսուցչից մեծ ջանքեր է պահանջում:
Որպեսզի երեխաները հասկանան, թե ինչ դեր ունեն բառերը նախադասության մեջ և որ դրանց ճիշտ դասավորվածության դեպքում միայն նախադասությունը իմաստ կարտահայտի: Այնուհետև երեխաներին ներկայացվում է բառի գծապատկերը, որն ունի փոքր ուղանկյան տեսք:

7.3. Բառի կազմություն: Վանկ:

Երբ բառի մասին տրված հասկացությունը ամրակայվել է, կարելի է գաղափար տալ վանկի մասին : Նախադասությունից բառն առանձնացնելու համար գծվում է մի նախադասության գծապատկեր: Նախադասությունից դուրս է բերվում մեկ բառ: Ցանկալի է, որ այն ունենա երկու վանկ, իսկ հետո կարելի է աշխատանքը տանել

եռավանկ, քառավանկ բառերի շուրջ: Ուսուցչուհին նախ ընտրված բառն արտասանում է՝ առանց վանկերի բաժանելու, ապա՝ վանկերի բաժանելով: Յանկալի է այս աշխատանքը իրականացնելիս ցուցադրել այն առարկաները կամ նրանց նկարները, որոնց անվանումների շուրջ տարվում է վանկային աշխատանքը: Յուրաքանչյուր առարկայի անվանում երեխաներն են արտասանում, ծափ տալով՝ այն բաժանում են մասերի և հաշվում մասերի քանակը: Երեխաները գալիս են այն համոզման , որ շրջապատում կան առարականեր, որոնց անունները կարելի է արտասանել մեկ ծափով, երկու ծափով, երեք ծափով և այլն:Նրանց պետք է բացատրել, որ այդ ծափերի թիվը պայմանավորված է բառերի մասերի քանակով: Սկզբում բառի ինքնուրույն միավորներին երեխաներն անվանում են մասեր, որովհետև այս բառն ավելի լավ է արտահայտում նրանց էությունը, և երեխաները շուտ են հասկանում: Իսկ հետագայում, երբ բառի մեջ եղած այս ինքնուրույն միավորների վերաբերյալ երեխաները որոշակի գաղափար կկազմեն, կկարողանան տրված մասերի բաժանել, ասել, թե քանի մասից է կազմված, արդեն կարելի է օգտագործել՝ ասել, որ բառի այդ մասերին անվանում ենք վանկ:

Բառը վանկերի բաժանելու, վանկերն իրար միացնելով բառեր ստանալու, բառի մեջ վանկի տեղը գտնելու կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել վարժություններ, խաղալ դիդակտիկ խաղեր: Բառի գծապատկերի վրա երեխաներին ցույց են տրվում վանկային կորերը:



7.4. Հնչյուն

Վանկն ուսումնասիրելուց հետո, սովորողներին կարելի է ներկայացնել հնչյունը, այն լեզվի ամենից փոքր արտասանական միավորն է. հնչյունն արտասանում ենք և լսում:

Ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են բառեր՝ ցանկալի է միավանկ բառեր: Ուսուցիչը դրանցից ընտրում է և գրատախտակին գծում է մի բառի գծապատկեր: Դրանից հետո դանդաղ արտասանելով բառը հաշվում են, թե քանի տարբեր հնչյուններ են լսվում այդ բառում, որից հետո բառի գծապատկերը բաժանում են այդքան մասերի: Երեխաները հեշտությամբ տարբերում են առաջին հնչյունը՝քանի որ բառն սկսվում է այդ հնչյունով և գրեթե անսխալ այն արտասանում, հետո ուշադրությունը կենտրոնացնում ենք վերջին հնչյունի վրա, որը նույնպես հեշտ են

առանձնացնում՝ քանի որ բառը վերջանում է այդ հնչյունով, այնուհետև ուշադրությունը հրավիրում ենք բառամիջի հնչյունների վրա, որոնք ուշադիր լինելու դեպքում նույնպես կարողանում են առանձնացնել: Եթե բառը բազմավանկ է հնչյունային վերլուծություն կատարելու համար, նախ բառը բաժանում ենք վանկերի և ապա վանկերը բաժանում հնչյունների:

Անընդհատ պիտի օգտագործել հնչում բառը լսել բառի հետ միասին, որպեսզի երեխաներն ընտելանան բառին, մտապահեն և հետագայում հնչյուն բառը հնչումից բխեցնելու համար: Երեխաներին կարելի է սովորեցնել հնչյունի երգը, որն ավելի կամրապնդի հնչյունի լսելի լինելու փաստը:

https://drive.google.com/drive/my-drive



7.5. Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ

*Բառի հնչյունային վերլուծությունը յուրացնելուց հետո, սովորողներին ներկայացվում է այդ հնչյուններն արտասանելու, դրանց տևական արտաբերելու տարբերությունը: Ձայնավոր և բաղաձայն հնչյունները երեխաները պետք է սովորեն տարբերակել գործնական ճանապարհով: Ուսուցչուհին դասարանին խնդրում է խմբով արտասանել որևէ բաղաձայն հնչյուն՝ իր ընտրությամբ, երեխաները երկար արտասանելուց հետո պարզում են, որ հնչյունը երկար արտասանելուց հետո «կորչում է» և լսվում է **ը**: Հետո առաջարկում է խմբով արտասանել որևէ ձայնավոր հնչյուն,որը երեխաները երկար կարող են արտասանել, անդադար և աշխուժորեն նկատում են, որ այդ հնչյունը մինչև վերջ լսվում է:*

Այսպիսի աշխատանք է կատարվում մի քանի միավանկ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

*Ուսուցչուհին ամփոփում է և ասում, որ եթե հնչյունը արտասանում ես և այն չի «կորչում», պահպանվում է և այդ հնչյունը կարելի է արտասանել շատ երկար, այդպիսի հնչյունները կոչվում են ձայնավոր, իսկ եթե հնչյունը արտասանելիս «կորչում» է և վերածվում **ը**-ի ապա այդպիսի հնչյունները բաղաձայն են: Այս աշխատանքով զարգացնում ենք բառի մեջ հնչյուններն առանձնացնելու, դրանց տեղը բառի մեջ որոշելու ունակության ձևավորումը:*

Բառի հնչյունային վերլուծությունն իրականացվում է մի քանի գործողությունների հաջորդաբար կատարման ճանապարհով.

- *Երեխան արտասանում է բառը՝ ցույց տալով բառի գծապատկերը: Ցանկալի է առաջին վարժությունները կատարել երկհնչյուն, եռահնչյուն բառերի շուրջ, իսկ հետագայում կարելի է աստիճանաբար ավելի բազմահնչյուն բառեր ընտրել:*
- *Բառի մեջ հնչյունի առանձնացում ձայնի բարձրությամբ: Պետք է այս աշխատանքը կատարել իբրև խաղ:*
- *Բառից առանձնացնել և մեկուսի արտասանել այն հնչյունը, որն արտաբերվում է երկար, ընդգծված:*
- *Բառի հնչյունային վերլուծություն՝ գծապատկերի վրա գունավոր կավճով, կամ տետրում գունավոր մատիտով բառի գծապատկերում ներկել ձայնավոր հնչյունի վանդակը կանաչ գույնով:*

Գործողությունների թվարկությունն իսկ ցույց է տալիս, թե որքան հսկայական մտավերլուծական աշխատանք է կատարում երեխան այս խնդրի լուծման ժամանակ: Գործողությունների հաջորդականության պահպանման շնորհիվ բոլոր երեխաները աստիճանաբար յուրացնում են այս ուսումնական խնդիրը՝ միաժամանակ նպատակասլաց կերպով առաջ մղելով իրենց մտավոր զարգացումը:
Այս աշխատանքը կատարելու համար առաջին դասարանցին պետք է կարողանա բառն արտասանել, արտասանած յուրաքանչյուր հնչյունի տեղը ցույց տալ գծապատկերի վրա, այնուհետև բառն արտասանել ամբողջությամբ: Պիտի նկատի ունենալ , որ այս կարողությունները միանգամից չեն մշակվում, սակայն մինչև դրանք հմտություն չդառնան տառաճանաչությունը սկսելը անիմաստ է: Որպեսզի յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորվի այդ հմտությունը, նա պիտի ինքնուրույն ասի բառը, գծի գծապատկերը և գունավորի համապատասխան վանդակները:
Այս գործողությունները պիտի կրկնվեն գրաճանաչության նախաայբբենական շրջանի յուրաքանչյուր դասի ժամանակ՝ օգտագործելով դիդակտիկ նյութեր և տարաբնույթ հնչյունային խաղեր: Երբ բավականին հմտորեն երեծաները կարողանան բառը հնչյունային վերլուծության ենթարկել, գծել բառի գծապատկերը և

ներկել ձայնավոր հնչյունի վանդակը, հարկավոր է երեխաների ուշադրությունը հրավիրել իրենց իսկ գծած բառերի գծապատկերներին: ցույց տալ, որ բառի գծապատկերի յուրաքանչյուր վանկում ներկված է միայն մեկ վանդակ: Այս կերպ երեխաները գալիս են այն համոզման, որ յուրաքանչյուր վանկ կարող է ունենալ միայն մեկ ձայնավոր հնչյուն, ինչպես նաև տեսնում են, որ բոլոր վանկերն անպայման ունեն ներկված վանդակ, այսինքն յուրաքանչյուր վանկի համար անպայման մեկ ձայնավոր հնչյուն է պետք՝ վանկ առանց ձայնավորի չի լինում: Այս աշխատանքներից երեխաները պիտի եզրակացություններ անեն, հասկանալով և հմտորեն կիրառեն սովորածը:

Գլուխ 8

Նախաայբբենական շրջանը ավարտելիս կկազմենք բանավոր հարցման ձևավորող (ուսուցանող), ոչ միավորային գնահատման ռուբրիկ

Ավարտելով նախաայբբենական փուլը անհրաժեշտ է կազմակերպել բանավոր հարցման ձևավորող (ուսուցանող) գնահատում, որի արդյունքում միավորային գնահատում չի ենթադրում: Նախաայբբենական փուլում կարևոր դեր է հատկացվում բանավոր խոսքին, քանի որ բանավոր խոսքի միջոցով ստուգվում են ինչպես սովորողի մտապահման, վերարտադրման, այնպես էլ նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Այս նպատակով անհրաժեշ տ է կազմել ռուբրիկ, որի միջոցով կիրականացվի ձևավորող գնահատումը:

Ռուբրիկում առանձնացվել են բանավոր խոսքին ներկայացվող երեք հիմնական պահանջ՝ ***խոսքի բովանդակությանը, խոսքի կառուցվածքին և խոսքի արտահայտման (ներկայացման) ձևին****: Սովորողի բանավոր պատասխանին զուգահեռ հնարավոր է ընտրել, թե որ չափանիշը սովորողը ինչ մակարդակով է ապահովում: Դիտարկումների և կատարած նշումների հիման վրա պլանավորվում է*

արդյունքների բարելավմանն ուղղված հետագա աշխատանքը, որը կատարվելու է արդեն այբբենական փուլում:

Խոսքի բովանդակությունը	*Խոսքը չի համապատասխանում թեմային, արտահայտված մտքերն անհասկանալի են:*	*Խոսքը կառուցված է թեմայի շուրջ, մտքերը համակարգված չեն, բառապաշարը մասամբ է համապատասխանում թեմային:*	*Խոսքը համապատասխանում է թեմային, ձևակերպում է ինքնուրույն մտքեր, կիրառում է համապատասխան բառապաշար:*	*Խոսքը համապատասխանում է թեմային, պարունակում է պատճառահետևանքային կապեր և լրացուցիչ տեղեկություն:*	*Խոսքը համապատասխանում է թեմային, կառուցված է վերլուծությունների և պարզաբանող օրինակների վրա:*
Խոսքի կառուցվածքը	*Մտքերը կապակցված չեն՝ թռչում է մտքից միտք:*	*Ասելիքը ներկայացնում է հատվածաբար, առկա են լեզվական սխալներ:*	*Խոսքը ամբողջական է, չկան լեզվական սխալներ:*	*Խոսքը գրագետ է, մտքերը ձևակերպում է ինքնուրույն, հակիրճ կամ ընդարձակ:*	*Խոսքն ամուր է, տրամաբանված գրագետ, ներկայացնում է պահանջված տարբերակով, (համառոտ, ընդարձակ հարազատ մնալով թեմային):*

Խոսքի արտահայտման (ներկայացման) ձևը	Մտքերն արտահայտում է անվստահ, երկմտելով:	Խոսքը ձգձգված է, կրկնություններով, առկա են անհարկի դադարներ:	Խոսքը սահուն է առկա են տրամաբանական դադարներ:	Մտքերը հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ:	Մտքերն արտահայտում է վստահ, համոզիչ՝ ներկայացնելով սեփական տեսակետը, ապահովելով կապը լսարանի հետ:

Գլուխ 9
Նախաայբբենական շրջանում գրելու նախապատրաստում

Նախաայբբենական շրջանում շատ կարևոր է սովորողների նախապատրաստումը գրելուն, հիմնականում երեխաները անվստահ են լինում սեփական ուժերի նկատմամբ, բայց երբ սկսում են աշխատել, իրենց տարիքին համապատասխան աշխատանքներ կատարել, երբ նույնիսկ փոքրիկ հաջողություններ են գրանցում և դրա համար խրախուսվում են, նրանց ինքնավստահությունը բարձրանում է, մեծանում է հավատը սեփական ուժերի նկատմամբ:

8.1. Գրաճանաչության նախաայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքները կարևորում են.

- Մատների մանր ֆալանգների ամրացումը,
- Ձեռքի դաստակի մարզումը,
- Տեսողական հիշողության զարգացումը
- Գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանց պահպանման ունակության մշակումը,
- Տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը
- Ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու,
- Ձախից աջ գրության ապահովումը.
- Հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակումը

Այս խնդիրների լուծումը պետք է սկսել նկարչությունից, ծեփից, ապլիկացիայից և մատերի մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից:

8.2.Սովորաբար երեխաները սիրում են նկարել և շատ են նկարում: Սակայն նպատակային նկարչությունն ունի իր խնդիրները.

- *Անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել գունավորել նկարն՝ առանց տրված պատկերների սահմաններն անցնելու՝ առաջարկելով նախ՝ մեծ, ապա՝ փոքր պատկերներ,*
- *Մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով, առանց տետրը շարժելու մեկ ուղղությամբ ներկելու ունակություն,*
- *Սովորեցնել մատիտը ճիշտ բռնել,*
- *Նկարչական տետրը դնել սեղանին 45 ^{0} թեքությամբ:*

Ներկելու ժամանակ աշխատանք պիտի տանել, որ երեխաները ոչ միայն կարողանան լսել ուսուցչի բացատրություններին ու հրահանգները, այլև կատարեն դրանք:

8.3.Հայերենի տառամասնիկներն ուսուցանելիս պիտի նկատի ունենալ, որ երեխաները գրել են սովորելու ամբողջական տառերով: Մասնիկների գրուսուցումը պարզապես գրելու նախապարտրաստում է: Այդ մասնիկները գրելիս երեխան դեռ չի պատկերացնում, որ դրանցին երկուսով, կամ երեքով հետագայում գրելու է տառեր: Այսպիսով, եթե երեխաները խաղերի միջոցով գրեն տառերի մասնիկները, այդ մասնիկները նմանեցնելով տարբեր կերպարների, կամ առարկաների, ապա հետագայում տառ գրելը սովորողների համար կլինի նույնպես զվարճալի ու դյուրին, երբ իրար կմիացնեն արդեն անուններ ունեցող մասնիկները:

Եզրակացություն

Ավարտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում հանգել եմ հետևյալ եզրակացության.

- *Նախաայբբենական փուլի կարևորությունը և այն ճիշտ կազմակերպելու կարողությունը, նպաստում է երեխայի աշխարհընկալման ձևավորմանը:*
- *Նախաայբբենական փուլը դա երեխային նախապատրաստելն է գրաճանաչության փուլին: Երեխան այդ փուլ է մտնում գիտակցաբար, հասկանալով և արժևորելով այդ նոր գործընթացը:*
- *Նախաայբբենական փուլում է ձևավորվում կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակությունը:*
- *Նախաայբբենական փուլում է զարգանում երեխայի ստեղծագործական երևակայությունն ու հիշողությունը:*
- *Նախաայբբենական փուլում է ձևավորվում երեխայի ուշադրությունը մեկ առարկայից մյուսի վրա արագորեն տեղափոխելու ունակությունը:*
- *Նախաայբբենական փուլից է ստեղծվում արժեհամակարգ և արժեքներ:*

Այսպիսով, նախաայբբենական փուլը հանդիսանում է շատ բարդ ու պատասխանատու գործընթաց, որի ճիշտ կազմակերպման դեպքում միայն հնարավոր կլինի սահուն և անցնցում անցում կատարել գրաճանաչության փուլ և ունենալ հաջողություններ:

Օգտագործված գրականություն

1. Սարգսյան Վ. Ա. Այբբենարան – ուսուցչի ձեռնարկ
https://online.fliphtml5.com/fumf/blhs/#p=12

2. Քյուրքչյան Ա. Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան-ուսուցչի ձեռնարկ
https://krtaditak.am/wp-content/uploads/2021/02/AYBBENARAN_metodakan.pdf

3. Տեր- Գրիգորյան Ա. Ե. «Ուսուցումը նոր առաջին դասարանում»
https://krtaditak.am/wp-content/uploads/2021/02/AYBBENARAN_metodakan.pdf

4. Գյուլամիրյան Ջ., «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»
https://aspu.am/website/images/files/sima%20cragir%20hayoc.pdf

5. Տեր-Գրիգորյան Ա.Ե. «Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը» http://5fan.ru/wievjob.php?id=38497